ԼՂԻՄ. ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՈԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի նոր օր, որը երկիրը մոտեցնում է ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարցին նվիրված պլենումին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանի աշխատանքին, որտեղ պետք է քննության առնվի Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, ավելի ու ավելի է սրում իրավիճակը ինքնավար մարզում և մանավանդ սահմանակից ադրբեջանական շրջաններում։ Այդ կապակցությամբ ԼՂԻՄ են մտցվել ներքին զորքերի լրացուցիչ ուժեր։ Ուժեղացվել են կարգախմբերը ճանապարհներին և մարզի որոշ գյուղերում։

Երկրամասի բնակիչների համար անսպասելի բան եղավ այս տարվա սեպտեմբերի 1-ին մարզի հեռուստատեսության ծրագրի հաղորդման ձախողումը, ընդ որում, միաժամանակ եթեր դուրս եկավ Ծուշիի այսպես կոչված ստուդիան։ Ըստ էության տեղի ունեցավ եթերի անօրինական զավթում առանց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների կոմիտեի ղեկավարությունների գիտության։ Նման ձեռնարկումները ամենևին չեն ծառայում ռեգիոնի իրադրության նորմալացման նպատակներին։ Մարզի հեռուստաժուռնալիստները և ռադիոժուռնալիստները այդ մասին տեղյակ պահեցին համապատասխան վերադաս ատյաններին և սեպտեմբերի 4-ին ի նշան բողոքի հայտարարեցին մեկօրյա գործադուլ։

Դրա հետ մեկտեղ Արցախում և նրա կենտրոնում՝ Ստեփանակերտ քաղաքում աշխատանքային ռիթմը կարգավորվում է։ Գործում են բոլոր ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկները։ Մեր բազմազգ հասարակության կարևոր իրադարձությունների շեմին նկատելիորեն ակտիվանում է մարզի քաղաքական կյանքը։ Տեղի են ունենում Ազգային խորհրդի նախագահության նիստեր, որտեղ քննարկվում են ԼՂԻՄ-ի սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման, երկրամասի իրադրության կայունացման ընթացիկ հարցերը։ Իրենց ընտրողների հետ հանդիպումներ են ունենում ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները։

Բնակչության կարիքների բավարարման նպատակով օգոստոսի 30-ից մտցված են Գորիս-Մարտակերտ-Գորիս, Գորիս-Գետաշեն-Գորիս, Գորիս-Հադրութ-Գորիս մարդատար ավիաուղերթերը, որոնք կատարվում են ՄԻ—8 27 տեղանոց ուղղաթիռներով։

Անցած ուրբաթ օրը Ստեփանակերտում տեղի ունեցած հերթական միտինգում քաղաքի բնակչությանը կրկին կոչ արվեց չենթարկվել հանրավոր ամեն տեսակ պրովոկացիաների, պահպանել հանգստություն և տոկունություն, լինել զգոն։ ԼՂԻՄ-ի պրոբլեմը պետք է լուծվի միայն հանգիստ, կոնստրուկտիվ իրադրության մեջ։ Այդ գործում հույզերը վատ դաշնակից են։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեպտ. թղթ.)

Ստեփանակերտ